



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

859

82  
Z-8121

468 6014

8

2011

Հայոց պատմութեան հաջորդ մաս Մայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԴԱՐԱՆԻ ՍՄԵՐԱՆ-ԲԵԿ ԼՈՒԱՑԵԱՆՑԻ.

82

2-21

ԿՎ

№ 2

ԽՀ

# ՀԱՄԼԵՏ

## ԴԱՆԻԱՅԻ ԻՇԽԱՆ

1002  
5489

ԹԱՐԳ. ՍԵՅԵԱԴ ԱՄԻՐԵԱՆՑ:

Ա աճաւակում է յօդուա հատուայ հայոց  
գըտամարիւական ակմէի:



ԲԱԳՈՒ:

Մ. ՎՈԼԶԿԻՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ:

1886

2003

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Марта 1886 года.

ՅԵՅՏԻ ՏԵՂԵՐԱԿՈՐ

Հայ գերասան

ՊԵՏՐՈՍ

ԱԴԱՄԵԱՆՑԻՆ

ԱՄԵՆԱԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՈՔ

ՆՈՒԻՐՈՒՄ է

ՀՐԱՄԱՆԱՀԱՆՅՈՒՆ

ՀԱՅԹԱՅՑՈՂՆԵՐԻՆ.

Անմահ Ակիլիամ Շեքսպիրի  
«Համլէտ» վերնագրով ողբեր-  
գութիւնը ՚ի թիւս քաղաքակր-  
թուած աղգերի բեմերին, նոյն  
պէս հիւրասիրուել է և մեր  
հայկական աղքատիկ բեմի վրայ:  
Թաէ այդ գրուածքը ինչքան վեհ  
ստեղծագործութիւնէ, այդ գիտէ  
ամեն մի զարգացած հայ, ուստի  
և յանդգնութիւն կը համարէինք  
մեր կողմից, եթէ սորա առթիւ  
բացագրութիւնների մէջ մըտ-  
նէինք: Աակայն ափսոս որ մենք  
չունենք մինչև այժմն այդ ան-  
մուհ գրուածքի տպուած և  
ժողովրդեան մէջ տարածուած  
թարգմանութիւնը:\*

\* ) Մենք լսելենք, ող «Համլէտը», Թարգմա-  
նած են պ. պ. Աենեքերիմ Արծրունի, Աւետիք  
Եղեկեան և Ստեփանոս Մալխանեան:  
Ծան. Ս. Ա.

Բայց որպէս զե յիշեալ ող-  
 բերգութեաններկայացմանը յա-  
 ճախող հայք և առ հասարակ  
 հայ ընթերցող ժողովուրդը,  
 «Համլէտի» (Եթէ կարելի է այս-  
 պէս ասել) գէթ կմաղքը աչքի  
 առաջ ունենայ, մենք տալիսենք  
 ահա նորա ձեռքը Շեքսպիրի  
 գրուածքի համառօտ բովանդա-  
 կութիւնը, թարգմանելով այն  
 1883 թ. Մուկվայում տպուած  
 մի ռուս գրքոյկից:

Ակեւար Ամիրեանց:

20 Փետրվարի 1886 թ.

Բարեւու:



Պանիայի Հերարուդա թագու-  
 հին իւր ամուսին, Համլէտ  
 թագաւորի յանկարծակի մա-  
 հեց յետոյ, գեռ երկու ամիս չանցած  
 պսակուեց հանգուցեալի եղբայր Վլա-  
 դիոսի հետ: Ժողովուրդը խիստ զարմա-  
 նալով էր նայում այդ խորհրդաւոր  
 իրողութեանը: Ուսնք վերաբերում էին  
 այդ թագուհու գէպի իւր նախկին ամու-  
 սինը չունեցած սիրոյն: Մի քանիսն  
 էլ նորա թեթեամուռթեանը, որով-  
 հեաւ Վլաւդիոսը ոչ իւր ներքին և ոչ  
 էլ արտաքին յատկութեամբ կարող էր  
 համապատասխանել Համլէտ թագաւորին:

Շատերը նոյնպէս կարծումէին, որ օծեալ  
թագաւորին սպանողը հէնց նոյն իսկ  
նորա հարազատ եղքայրն է: ‘Նա այդ  
եղեւնադորժութիւնը անելով՝ կամեցաւ  
նախ և առաջ պատկուել եղքօր կնոջ հետ,  
որպէս զի կարողանայ սեփէականացնել  
իրան Դանիայի գահը և յետոյ էլ ար-  
տաքսել տայ պալատից արքայորդուն,  
Դանիայի գահի օրինաւոր ժառանգ  
։ամլէտին:

Ներտրուդայի այդպիսի շուտափոյթ  
պատկուիլը բաւականի տիտուր և զգալի  
տպաւորութիւն գործեց երիտասարդ  
։ամլէտի վերայ, որի զգացմունքը լի էր  
ազնուութեամբ և անկեղծութեամբ: Բն-  
դունելով իւր հօրը որպէս մի գերքնական  
զօրութիւն, նա ամենախոնարհյարգանքով  
սկսաւ վերաբերուիլ դէպի հանգուցեալը  
և նորա տիտուր շիրիմը: Բայց և այնպէս  
ոչ մի բանով չը կարողացաւ հաշտուիլ  
իւր մօր տարօրինակ արարքի հետ: Ամօթ-  
իսածութիւնը և արհամարհանքը դէպի  
իւր մօր հրեշային վարմունքը, և մի և  
նոյն ժամանակ սիրելի հօր թանգագին

կորուսար, բոլորովին կերպարանափոխել-  
էին ։ամլէտին: Տերամած և ծայրահեղ  
զայրացած երիտասարդը միշտ խորշումէր  
հասարակական ժողովներից: ‘Նա ոչ մի  
տեղ չէր գտնում իրա համար մի որ և  
է միսիթարութիւն: Այլ ևս չին հե-  
տաքրքրում նորան ոչ պատերազմական  
պարապմունքը, ոչ որսորդութիւնը, որ  
երիտասարդ մարդու կեանքի բաւակա-  
նութիւններից ամենազլաւորն էր, և ոչ  
էլ գրեանք կարդալը, որ Դանիայի գահի  
ժառանգի պարապման միակ սիրելի առար-  
կան էր: Աշխարհի գոյութիւնը նրա հա-  
մար մի կատարեալ ունայնութիւն էր:  
։ամլէտը նրան նմանացնումէր մի անքաղ-  
հանեալ այդին, որի մէջ անուշաբոյր  
ծաղիկները կըթառամին, բայց կ'զօրեղա-  
նան փուշ և տատասկիր: Անբուժելի վեր-  
ըլը, որը ստացել էր նա, գահից զրկուե-  
լուց այնքան ծանր տանջանք չըսկատձա-  
ռեց նրան, ինչքան հօր մահը: Ոօր ամե-  
նաանպիտան բնաւորութեան համար նա  
միշտ տանջվումէր որ նա այդպէս շուտ  
մոռացաւ իրան երբեմն անսահման սիրող

և յարգող ամսւանոյն։ Համբէտը կրակի  
պէս այրվումէր, յիշելով մօր կեղծ հռ-  
գեկան ցաւը, երբ նա արտայայտում էր  
իւր ամսւանու մեռնելու ժամանակը։ Կա  
յիշումէր նոյնպէս և այն ողքալի ժամը  
երբ մայրը գրկած հօր անշնչացած դիակը  
հրաժարականի կեղծ համբոյրներով էր  
ծածկում նորան . . . : Եւ այդ բոլորից  
յետոյ, գեռ ուղիղ երկու ամփս ըլ անցած,  
պսակվումէ հանգուցեալի եղբօր հետ։  
Այդ գարշելի և շուտափոյթ պսակը, մի  
անարժան գահակալի հետ, որը ընդէմ  
բնութեան և խղճի օրէնքի էր աեղի  
ունեցած, Համբէտի համար այնքան մեծ  
նշանակութիւն ունեցաւ, ինչքան տաս-  
նեակ թագաւորութեան կործանուիլը։  
Ահա այդ էր զլիսաւոր պատճառը, որ  
օրից օր մաշվում էր երիտասարդ ար-  
քայրդու ազնիւ սիրաը։ Կորապատկ-  
ները, Ալաւդիսուր և Հերտրուդան, միշտ  
աշխատումէին սիրելի դառնալ Համբէտին,  
բայց տարաբաղդաբար ի զուր էր անցնում  
նոցա գործ գրած ջանքը։ Կա միշտ ու-  
ներ հազին սև շորեր, որ նշան էր սուզի

իւր սիրելի հօր կորստեան համար։ Հենց  
այդ շորերով էլ նա ներկայացաւ նորա-  
պսակներին շնորհաւորելու, որպէս զի ըլ  
կարողանայ մասնակցել նոր թագաւորի  
գահակալութեան հանդիսին։ Համբէտը  
կարծումէր, որ այդ օրը մի թշուառ ու  
սև օր էր նորա համար։

Համբէտին ակրող վշտի վրայ աւե-  
լացաւ նա ևս և մի նորը։ Ոչ ոքին յայտ-  
նի չէր թագաւորի մահուան պատճառը։  
Այդ ցաւը ևս առաւել սկսեց տանջել  
երիտասարդ իշխանին։ Թէպէս ոմանք  
ասում էին, որ թագաւորը մեռելէ օձի  
խայթումից, բայց Համբէտը շատ քիչէլ  
հաւատում այդ լուրին։ Կա այդ օձին  
ընդունումէր իւր հօր եղբայր Ալաւդիո-  
սին, որը սպանելով իւր հարազատ եղ-  
բօրը, սեփհականացրեց իրան նա ևս նորա  
գահն էլ։ Կա կարծումէր, որ իւր սիրելի  
հօրը խայթող օձը, այժմս նորա աթոռի  
վերայ նստողն է։

Թէպէտ այդ կասկածները մշտապէս  
տանջաւմէին Համբէտին, բայց այնու ամե-  
նայնիւ նա զեռ մի որոշ եղբակացու-

թեան չէր կարողանում հասնել: «Ետ  
ստէպ ստէպ մտածումէր, արդեօք ուղիղ  
է հօրեղբօր այդ գաղանային վարմուն-  
քը, կամ թէ յիրաւի մայրը գիտէ այդ  
բանը, հետևաբար նորա համաձայնու-  
թեամբ է եղել եղեռնազործութիւնը:  
Ահա մտքեր, որոնք գիշեր և ցերեկ տան-  
ջում և հանգստութիւն չին տալիս  
ազնիւ իշխանին: Ճերտուդա թագուհու  
ամուսնանալուց յետոյ, դեռ չ'անցած մի  
քանի շաբաթ, յանկարծ լուր տարածուեց  
տպալատի պահապան զինւորների մէջ, թէ  
ուղիղ երեք գիշեր է, տասն և երկու  
ժամին, ինչ որ մի ուրուական է ներկայա-  
նումնոցա՝ ճիշդ հանգուցեալ թագաւորի  
կերպարանքով: Այդ լուրը հասաւ և  
Ճամկտի ականջին: Ասումէին նոյնպէս,  
թէ այդ երեսյթը գալիս է միւս աշխար-  
հից և միշտ զրահաւորուած է ճիշդ այն  
ձեռվ, ինչպէս թագաւորը իւր կենդանու-  
թեան ժամանակ կը զրահաւորուէր:  
Ռոլոր տեսնողները, որոնց թվում և  
Ճօրացիան, Ճամկտի սրտակից ընկերը,  
վկայում էին տարօրինակ ուրուականի

մասին և նոյնպէս էլ գալու ժամանակը:  
Ամենքն էլ միաբերան հաստատում էին,  
որ նա գալիս է գիշերուայ ուղիղ տասն  
և երկու ժամին: Երեսի գծագրութիւնը  
ցոյց էր տալիս, որ նա աւելի տխուր էր,  
քան թէ բարկացած: Որուքը բոլորովին  
սպիտակ, կարծես արծաթաջրած լինէր:  
«Եա մի և նոյն զրութեան մէջ էր ինչպէս  
և իւր կենդանութեան ժամանակը: «Եա  
ոչ մի պատասխան չը տուեց, երբ նորան  
խօսացրին: Տեսնողները նոյնպէս վկայում  
էին, որ ուրուականը մի գիշեր գլուխը  
բարձրացրած կարծես թէ կամենումէր  
խօսել, բայց առաւօտեան աքաղաղի  
ձայնը խանդարեց նրան, ուստի և իսկոյն  
անյայտացաւ: Երիտասարդ իշխանը թէ-  
պէտ զարմանումէր այդ տարօրինակ  
երեսյթի վրայ, բայց այնուամենայնիւ  
հաւատումէր, որ այդ տեղ մի որ և է  
խորհրդաւոր բան կայ: Ուշագրութեամբ  
լսելով գիշերուայ ուրուականի նկարագրու-  
թիւնը, նա ընդունումէր, որ այդ ու-  
րուականը ճիշդ իւր հօր կերպարանքն է  
որը գերեզմանի խորքերից կամենումէր

որդուն մի ինչ որ գաղտնիք հաղորդել,  
որ իւր կարծիքով շատ հետաքրքիր բան  
պիտի լինէր: Ամլէտը զրականապէս վըճ-  
ռեց, որ միւս զիշերը պահապան զինուոր-  
ների հետ ինքը ևս սպասէ խորհրդաւոր  
ուրուականին:

Հենց որ զիշեր եղաւ նա Հօրացիայի  
և Պարցելոյի հետ դարատափի մօտ ուշի  
ուշով սկսեց սպասել ուրուականին, որը  
երկում էր և նախընթաց զիշերները:  
Հազիւ նրանք սկսել էին խօսել միմիանց  
հետ զիշերուայ խոնաւութեան և ցրու-  
թեան զրայ, երբ Հօրացիան, Ամլէտի  
մտերիմ բարեկամը, յայտնեց ուրուականի  
երկալը:

Տեսնելով հօր կերպարանքը, Ամա-  
լէտը բոլորովին կորցրեց իրան և չը գի-  
տէր ինչ անել: Ջիմանտով այդ ուրուա-  
կանի բարի և չար լինելը, հետեաբար  
նորա գալու նպատակը, Ամլէտը խօսին  
և եթ սկսեց բարի հրեշտակնելին կանչել  
օգնելու իրան և իւր ընկերացը: Յետոյ  
փոքր առ փոքր, սկսաւ ոգի առնել: «Եա  
նկատեց, թէ ուրուականը, որ շատ նման

էր հանգուցեալ հօրը, շատ կարեկցաբար է  
նայում, և կարծես թէ կամենում է մի  
ինչ որ նոր բան ասել իրան: Ինդհանրա-  
պէս Ամլէտը ոչ մի երկիւղ չը կրեց  
ուրուականից և այդ պատճառաւ սկսեց  
նորա հետ խօսել ու անուանել հայր  
Ամլէտ: Որդին սկսեց աղաչել և խնդրել  
հօրը, որ սա յայտնի իւր գալու պատճառը:  
Խնդրեց նոյնպէս յայտնել, թէ ինչ հան-  
գամանքներից զրդուած նա խաղաղ գե-  
րեզմանից դուրս է եկել և այդ տեսակ  
լուսնկայ գիշերը ման գալիս խոնաւ և  
ցուրտ երկրի վերայ: Ա ելստին սկսեց  
աղաչել, որ ուրուականը յայտնի իւր գալու  
պատճառը, գուցէ նա հանգիստ չէ իւր  
յաւիտենական բնակարանում, հետեւապէս  
կարողէ արգեօք մի որ և է օդնութիւն  
հասցնել նորան: Ուրուականը ուշադրու-  
թեամբ լսելով Ամլէտի անկեղծ խօս-  
քերը, զլխով նշան արաւ, որպէս թէ  
կամենում է նորա հետ խօսել բայց մի և  
նոյն ժամանակ գաղտնի և առանց մարդ-  
կանց ներկայութեան: Հօրացիան և  
Պարցելօն սկսեցին խնդրել, աղաչել

Երիտասարդ իշխանին, որ սա չը հետեւի  
ուրուականի չար խորհրդին և չ'առանձ-  
նանայ նորա հետ: Բնդունելով ուրուա-  
կանին որպէս չար հոգի, նոքա երկիւղ  
կրեցին, թէ մի գուցէ նա տանի ձամ-  
լէտին և իրանց մօտ գտնուած ժայռից  
վայր զցի, կամ թէ հասնելով մերձակայ  
ծովակին, նա հրեշի կերպարանքով ներ-  
կայանայ ձամլէտին և բոլորովին խելա-  
գարացնէ նրան: Բայց զոցա խնդիրը և  
հազար ու մի տեսակ աղաչանքը չը կարո-  
ղացան համոզել ձամլէտին, որը դրակա-  
նապէս վճռել էր հետեւ ուրուականին:  
Կեանքը ձամլէտի համար ոչինչ բան  
էր, և նա արդէն վաղուց նրանից ձեռք  
էր վերցրել: Ձամոզուած լինելով հոգւոյ  
անմահութեան վրայ, նա ոչ մի վատ բան  
չէր սպասում ուրուականից: Առիւծի պէս  
դուրս պրծնելով ձօրացիօյի և Վարցե-  
լոյի ձեռքից, ձամլէտը սկսաւ գնալ  
ուրուականի յետելից այն տեղ, ուր նա  
կը տանէր:

Այսպիսով երկուքնել առանձնանալով  
մի անմարդաբնակ տեղ, սկսեցին իրանց

Խորհրդաւոր խօսակցութիւնը: Տիրող  
լուութիւնը ընդհատուեց ուրուականի  
սրտաշարժ ատենաբանութեամբը: «Եա  
յայտնապէս անուանեց իրան հօր ձամլէտի  
ստուելը: Յայտնեց նոյնպէս, թէ ինչ զար-  
հուրելի կերպով սպանեց իրան իւր եղ-  
բայր Այտղիոսը, որպէս զի կարողանայ  
սեփականացնել ինչպէս իւր սիրելի  
ինոջը, նոյնպէս էլ Պանիայի գահը, որ  
իւր օրդի ձամլէտի օրինաւոր ժառան-  
գութիւնն էր: Ուրուականը շարունակեց  
պատմել մի առ մի իրան ամենաստոր  
դաւածանութեամբ սպանուիլը: Այն ժա-  
մանակ, երբ նա այդում քնած էր, ինչպէս  
սովորաբար նա միշտ ձաշից յետոյ կը  
հանգստանար, Այտղիոսը ծառի տակից  
դուրս պրծնելով, գաղանաբար ածեց նորա  
ականջը թունաւոր հեղուկը, որը, ինչպէս  
յայտնի է, վայրկենաբար վարակումէ մար-  
դու ամբողջ մարմինը ու սպանում: Այդ  
պէս գաղանաբար սպանելով թագաւորին  
խեց նրանից Պանիայի գահը ու թա-  
գուհին: Ձայրը խնդրեց ձամլէտից, թէ  
արդարեւ եթէ վերջինը սիրումէ իրան,

թողնա, մի անգամընդ միշտ, վրէժխնդիր լինի եղբայրասպան թագաւոր Ալաւդիոսից: Մի և նոյն ժամանակ հանգուցեալ թագաւորը գանգատուեց իւր կնոջից, որ սա կորցնելով իրան, բոլորովին մոլորուել է ուղիղ ճանապարհից: Որպէս ապացոյց, նա ցոյց տուաւ իւր մահից յետոյ նրա շուտափոյթ պսակուիլը Ալաւդիոսի հետ: «Կա դատապարտումէր իւր կնոջ արարքը, որին երբեմն անսահման սիրումէր: Ուրուականը պահանջումէր, որ Համբէտը, վաղ թէ ուշ, վրէժխնդիր լինի մարդասպան հօր եղբօրից: Բայց մի և նոյն ժամանակ, նա խնդրում է աղաչում էր, որ որդին աշխատի ամենայն կերպ հսկել իւր հարազատ մօր որպէս զի մի անախորժ բան չը պատահի նրա հետ: «Թողն նրան երկինքը ինքը պատժէ», ասումէր հանգուցեալ թագաւորը, «Թող մշտապէս իւր խիզը վրէժխնդիր լինի նրան:» Ուշադրութեամբ լսելով այդ ամենը, Համբէտը խոստացաւ կատարել ուրուականի բոլոր պատուերները ու խնդիրքը: Եյդ միջոցին ուրուա-

կանը իսկոյն և եթ անյայտացաւ:

Համբէտի առաջին մտածմունքը ուրուականի հեռանալուց յետոյ այն եղաւ, որ կարելոյն չափ աշխատի մոռացութեան տալ այն բոլորը, որոնք օձի պէս կրծում էին նորա սիրով: Վոռանալ նոյնպէս այն ամենը, ինչ որ նա իւր կեանքումը չէ սովորել, որպէս զի աւելի ուշ ու միաբը կենդրուացնի հօր կորսաեան և նրա խորհրդաւոր խնդիրքի վրայ: Ուրուականի հազորդած գաղտնիքը Համբէտը վճռեց մի առ մի պատմել իւր բարեկամներին Հօրացիային և Վարցելոյին, այն պայմանաւոր սոքա բոլորովին լռութիւն պահպանեն և հետևապէս ոչ որի էլ չը յայտնեն ուրուականի ներկայանալը: Եյդ գիշերուայ զարհուրանքը և առաջուայ կրած տանշանքները մի այնպիսի ցաւալի գրութեան մէջ ձգեցին երիտասարդ իշխանին, որ նա բոլորովին կերպարանափոխուեց: Գգերը սկսեցին թուլանալ և օրից օր նա սկսեց հալուել: Խըսի գծագրութիւնը պատեց տիրութեամբ և կարծես թէ նրա վրայ իսկական խելագարութեան նշաններ էին

Երեսում: Երկիւղ կրելով, թէ մի գուցէ իւր այդ փոփոխութիւնը պատճառ լինի յայտնելու գիշերուայ անցըը թագաւորին և պալատականներին, ձամբէտը վծուեց իրան զիժ ներկայացնել: Եթէ, — մասձում էր ձամբէտը, — հօր եղբայրը իմանայ էլ թէ բոլոր եղելութիւնը իրան, ձամբէտին, յայտնի է այնուամենայնիւ ուշք չե դարձնել նրան, աչքի առաջ ունենալով իւր հոգեկան հիւանդութիւնը, որից թագաւորի համար ոչ մի վնաս չէր կարող առաջ գալ: Օգուտ քաղելով թագաւորի այդպիսի մի համոզմունքից, իշխանը իրան համար գործելու լայն ասպարեզ բացեց:

Եւ արդարեւ հեց միւս օրից ձամբէտը սկսաւ խելագարի դեր խաղալ: Տողը բերեանք սկսեցին նկատել նրա խօսակցութեան մէջ կատարեալ անմտութիւն, բնութեան մէջ նոյնպէս փոփոխութիւն, բայց և այնպէս ոչ ոք չէր կարող երեակայել անդամ, որ ձամբէտը այդ անում լինի այն պատճառաւ, որպէս զի առ ժամանակ կարողանայ խորհրդաւոր տեսիլքը ծածուկ պահել: Որովհետեւ թա-

գաւորը և թագուհին գիշերուայ ձամբէտի և ուրուականի մէջ տեղի ունեցած խորհրդաւոր խօսակցութիւնից տեղեկութիւն չունեին, այդ պատճառաւ ձամբէտի մէջ յղացած փոփոխութիւնը ընդունումէին նոքա որպէս սիրոյ հետեւանք: Կարծումէին թէ նա սիրահարուած է մի որ և է գեղեցիկ օրիորդի վերայ: Դեռ իւր հօր կենդանութեան ժամանակ, երբ ձամբէտը գոնումէր իրան անսահման ուրախութեան մէջ, Օֆելիա անունով մի օրիորդի սիրումէր: Այդ օրիորդը հանգուցեալ թագաւորի սենակապետի աղջիկն էր: «Նա օրիորդի հետ բաւականին մօտ յարաբերութեան մէջ էր: Ձամբէտը սակա սակա զրումէր Օֆելիային սիրահարական նամակներ, որոնց մէջ և խնդրումնորա ձեռքը: Ուղարկում էր նոյնպէս օրիորդի համար շատ հարուստ իրեղեններ, որոնց թւում և հարսնախօսութեան մատանի: Օֆելիան նոյնպէս գոնելով ձամբէտի մէջ աղնութեան և անկեղծութեան նշաններ, խօստացաւ սիրել ձամբէտին և նորա

կինը դառնալ: Ասկայն ուրուականի հա-  
ղորդած գաղտնիքից յետոյ, Համբէտը այլ  
ևս ուշը չը դարձեց Օֆելիայի վրայ:  
Կարծես բոլորովին անյայտացաւ նորա  
մէջ երբեմն կրակի պէս այրվող սէրը:  
Բայց օրիորդը երբէց չէր նեղանում իւր  
սիրականի այդ սառն վարմունքից: «Նա  
այդ բոլորը վերագրելով Համբէտի ուղեղի  
խանգարմանը, չէր կամենում այլ ևս վի-  
րաւորել այն սիրտը, որին անսահման  
սիրումէր: Օֆելիան այդ դէպքում  
նմանեցնումէր Համբէտի ազնիւ հոգին  
այն զանգակներին, որոնք, ինքն ըստ ին-  
քեան սովոր են դուրս հանել քաղցր և  
գրաւիչ երաժշտութեան ձայներ, բայց,  
միևնոյն ժամանակ մի անհմուտ ձեռք կպչե-  
լուց կ'կորցնեն իւանց քաղցրութիւնը և կը  
նմանին մի խումբ աներդաշնակ երգեցող-  
ների: Թէաէտ Համբէտը 'ի սրտէ ատում  
էր եղայրասպան թագաւորին և ար-  
համարումիրան շրջապատող հասարակու-  
թիւնը, սակայն իւր ազնիւ սրտի մէջ  
ունէր մի անկիւն որ տեղ և ամփոփում  
էր Օֆելիայի քաղցրիչ սէրը: Մի անգամ

ընկղմուած լինելով սիրոյ զգացման մէջ,  
նա ըմբռնեց, որ իւր վարմունքը Օֆե-  
լիայի հետ ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ մի  
տմարդութիւն և փոքրութիւն: Հա-  
մոզուեց միևնոյն ժամանակ, թէ սիրող  
սրտին այդպիսի մի հարուած տալը կը  
նշանակէ մարդուն կենդանի ձգել մի ան-  
դունդի մէջ: Խսկոյն մի նամակ գրեց  
օրիորդին, որի մէջ յայտնելով իւր սէրը,  
մացրեց միևնոյն ժամանակ և մի քանի  
անկապ խօսքեր, որպէս զի օրիորդը ոչինչ  
չ'հասկանայ: Պարզ է, որ այդպիսի մի  
բովանդակութիւն ունեցող նամակը միշտ  
վառ պիտի պահէր Օֆելիայի մէջ սիրոյ  
կայծերը հանդերձ հաւատարմութեամբ:  
«Նա իւր նամակի մէջ աղաջում էր օրիոր-  
դին, որ իւրեանց սիրոյ վրայ այլ բան  
չ'տածէ, թէ վերջապէս լոյսը կարողէ  
դադարել իրա լուսաւորութիւնից, կամ  
թէ երկիրը արեգակի շուրջը պտոյտ  
գալուց, բայց նա ոչ երբէք կը մոռանայ  
Օֆելիային: Խսկ քանի որ այդ օրինակ-  
ները կենդանի են, կենդանի կը մնայ նոյն  
պէս և իւր սէրը դէպի նա: Թէ Օֆե-

լիան կատարեալ իրաւունք ունի իրան  
ստախօս անուանելու, եթէ արդարեւ նա  
իւր սիրոյ վրայ հաստատ չ'մնայ և չը  
կատարի իւր խոստմունքը։ Ահա այդ և  
սորա պէս խօսքերով էր զարդարուած  
ձամլէտի սիրահարական նամակը։ Օֆե-  
լիան այդ նամակը ցոյց տուաւ իւր հօրը։  
Աերջինը նոյնպէս բարւոք համարեց  
ձամլէտի նամակը ներկայացնել նորա-  
պատկներին—թագաւորին և թագուհուն,  
որոնք օրից օր դրականապէս համոզուեցին,  
որ ձամլէտը իսկապէս խելագարուած է,  
և այդ յառաջացած է սիրոյ հետեանքից։  
Թագուհին կարծումէր, որ իւր որդւոյ  
նախկին առողջութիւնը կարողէ կըկին  
վերականգնուիլ Օֆելիայի գեղեցկու-  
թեամբ։ Ուէ օրիորդի հոգւոյ աղնիւ  
յատկութիւնը միայն կարողէ փարատել  
ձամլէտի ցաւը, եթէ սոքա միաւորուին  
սուրբ ամուսնութեամբ։

Բայց ձամլէտի ցաւը շատ ծանր  
էր և անբուժելի։ Նա այդ տեսակ  
դեղերի կարօտութիւն չունէր, ինչպէս  
որ մտածում էր մայր թագուհին։ Խոր-

հըրդաւոր ուրուականը կարծես հսկում  
էր իշխանի յետեկց և հանգստութիւն  
չէր տալիս նորա երևակայութեանը։  
Երիտասարդը նոյնպէս տանջվումէր գի-  
շեր և ցերեկ մտաբերելով հօր ցաւալի  
սպանութիւնը, և չէր էլ կարող հանգս-  
տանալ, մինչև որ չը իրագործէր ուրուա-  
կանի կաղմած ծրագիրը, որի զօրութեամբ  
վրէժինդիր պիտի լինէր եղբայրասպան  
թագաւորից։ Բայց ինչ ձեռվ կարելի էր  
իրագործել այդ միտքը, քանի որ թագա-  
ւորը միշտ շրջապատուած էր իւր նախա-  
րարներով և պահապան զինուորներով։  
Բացի սորանից աւելի դժուարն այն էր,  
որ ձամլէտի մայրը գէթ մի ժամ չէր  
հեռանում թագաւորից, իւր սիրելի  
ամուսնուց։ Ձամլէտի այդ տեսակ խորհր-  
դածութիւնը յանկարծ նրա մէջ միշան-  
ցաւոր միտք առաջացրեց։ Խւ վերջապէս  
սպանելով նա հօր եղօրը, կարող էր  
անբաղդացնել իւր հարազատ մօլն էլ։  
Ձամլէտը այնպիսի գթասիրտ մարդ էր,  
որ ոչ մի ժամանակ չէր թոյլ տալ իրան  
իզուր տեղը եղեռնագործութիւն գոր-

ծել; Անբաղդ իշխանին պատեց կատարեալ մելամաղձոտութիւն։ “Նա այդ դրութեան մէջ սկսեց կասկածել ուրուականի վերայ; Արելի է, ասում էր ձամբար, որ չար հրեշը իւր հօր կերպարանքով ուղումէ խափել իրան, մի չար նպատակաւ; Որովհետև գիշերուայ ուրուականի հաղորդած տեղեկութիւնը կարօտ էին հաստատութեան, այդ պատճառաւ էլ ձամբարը բարեզ համարեց առժամանակ համբերել, մինչև որ աւելի հաստառութիւններ կը ժողովէ հօր սպանութեան համար:

Ձամբարը այդ տեսակ անորոշ դրութեան մէջ էր, երբ մի խումբ գերասաններ եկան թագաւորի պալատը ներկայացումներ տալու; “Նախկին ժամանակներում սոցա ներկայացումները մեծ բաւականութիւններ էին պատճառում իշխանին, նա մանաւանդ, երբ պատմում էին Տրոյեայի Պրիամոս թագաւորի մահը, հետեւապէս և նորա կնոջ ձեկուբայի կրած վիշտը սօրա առթիւ; Խշանը ուրախութեամբ ընդունելով իւր վաղեմի բարեկա-

մներին խնդրեց կրկնել յիշեալ թագաւորի մահուան պատմութիւնը: Դերասանը սկսեց նկարագրել մի առ մի ձերունի թագաւորի ցաւալի սպանումը, քաղաքի կողծանուիլը և խեղձ ժողովրդի հարստահարուիլը: Յետոյ պատմեց թագուհու կրած վիշտ ու տաւապանքը ամուսնոյ սպանութիւնից յետոյ, նորա ոտարաց թափառելը սրահում, մի գծուծ ծածկոց ունենալով գլխին, որ մի ժամանակ առաջ զարդարուած էր արքունի նշաններով, և վերջապէս թէ գիշերները ինչ տեսակ վերմակով էր փաթաթում բաց ուսերը, որոնք երբեմն ծածկուած էին լինում թագաւորական թանկագին ծիրանիով: Դերասանը այնպիսի ցաւակցութեամբ էր պատմում ձեկուբայի և Պրիամոսի կրած վշտերը, որ լսողները բոլորը գրեթէ լաց էին լինում: Պատմիչը նոյնպէս չէր կարողանում պահել իւր արտասուբը, որոնք հեղեղի պէս հոսումէին նորա աչքերից: Այդ ներկայացումը ձամբարին մի խորհրդաւոր մատծմունքի մէջ ընկղմցըրեց: «Եթէ մի քանի դար սորանից

առաջ, ասումէր համիշտը, պատահած  
տխուր դէպը կարողէ մարդկանց սրտի  
վերայ այդ քան ազգել եթէ սա կարողէ  
լսողներին այդքան ցաւ ու վիշտ պատ-  
ճառել ապա ի՞նչու չէ կարող ցաւացնել  
այն մարդու սիրտը, որի հօրը կարծ ժա-  
մանակ սորանից առաջ սոսկալի կերպով  
սպանեցին: Եւ այդ ամենը նորայ սրտի  
վրա անջնջելի առաներով դրօշմուելով ձգել  
է նորան մելամաղձոտ և անորոշ դրու-  
թեան մէջ: Բայց նա սառնասրտութեամբ  
դեռ տանումէր այդ զարհուրելի իրողու-  
թինք: Անածելով գերասանների և նոցա  
խաղերի վրայ թէ ինչպիսի արագութեամբ  
կարողանումեն ազգելմարդկանց զգացմուն-  
քների վրայ, հետևապէս և կարողանում  
են ախուր տպաւորութեանց մէջ թողնել  
նոցա, երբ ներկայացման նիւթը վերց-  
նումեն կեանքի մէջ պատահած ձշմարիտ  
եղելութիւնից: Այդ խորհրդածութեան  
մէջ էր համիշտը, երբ մտաբերեց այն  
աւազակին, որ տեսնելով բեմի վրայ մար-  
դասպանութեան թարմ օրինակը, որի  
նմանները շատ անգամ իւր ձեռքովն է

անցել, այն տեսակ տանջում է խիղճը  
նրան, որ պատրաստ է լինում հէնց այն  
բոպէին խռոտովանել իւր յանցանքը:  
համիշտը ուղեց փորձել այդ օրինակը  
թագաւորի վրայ: «Կա գրեց մի բեմական  
գրուածք, որի բովանդակութիւնը ձիշդ  
նմանութիւն ունէր հօր սպանութեանը:  
Եւ գերասանները պիտի ամենայն ձշգու-  
թեամբ ներկայացնէին, որովհետեւ համ-  
էշտը հրաւիրել էր այդ գիշեր թագաւորին  
և թագուհուն ներկայ լինել ներկայաց-  
մանը: Կերկայացման ժամանակը համ-  
էշտը ուղումէր նկատել թէ ինչ տպա-  
ւորութիւն է թողնելու թագաւորի  
վրայ այդ ողբերգութիւնը, և արդարեւ  
որբան ուղիղ է ուրուականի գիշերուայ  
հաղորդածք: Այդ նպատակաւ բեմը  
շինեցին պալատում: Յիշեալ ողբերգու-  
թեան բովանդակութիւնը հետեւան էր:  
Վենաս քաղաքում երբեմն ապրումէր  
ձրօնզագ անունով մի թագաւոր, կնոջ  
անունն էր Բաբդիստա: Ոցա մօտ բա-  
րեկամներից մէկը, Լուցեան անունով,  
կամենալով լուել թագաւորի գահը մի

անգամ թագաւորը այգում եղած ժամանակը սպանեց գեղով, իսկ կարծ ժամանակից յետոյ, պսակուեց հանգուցեալի կնոջ վրայ:

Թագաւորը երբէք ըստ մտածելով, որ այդ տեղ իրա համար մի նենդ որոգայթ է լարուած, ինքը, կինը և բոլոր պալատականները ուրախութեամբ այցելեցին թափրոնը: Ամիշտը օգուտ քաղելով այդ հանգամանքից, այնպիսի մի տեղ ընտեց իրա համար, որ հեշտութեամբ կարողանայ տեսնել, թէ այդ ողբերգութիւնը թագաւորի վրայ ինչպիսի տպաւորութիւն պիտի թողնի: Գործողութիւնը սկսուեց ձրօղանդի և իւր կնոջ խօսակցութեամբը: Վինը երդւումէր, որ նա ոչ մի ժամանակ չի պսակուիլ երկրորդ մարդու հետ, եթէ նրա ամուսինը իրանից շուտ մեռնի: «Կա ասում էր, թող երկինքը կրակ թափի այն կնոջ զլիսին, որը կրգաւաճանի իւր ամուսնոյն, հետեւապէս թող կորչեն և փշանան այն չար կանայքը, որոնք իրանց մարդկանց սպանելով, պսակվումն ուրիշ մարդկերանց հետ: Ամիշտը նկատեց, որ

դերասանուհու խօսակցութիւնը այնպիսի վատ տպաւորութիւն գործեց թագաւորի և թագուհու վրայ, որ նրանք բոլորովին կերպարանափոխուեցին: Ապայն երբ լուցիանը մտաւ այգի, որ սպանի ձրօն-զագին, որը այդ ժամանակ բնած էր, թագաւորը հոգեկան այնպիսի ցնցումն ստացաւ, որ երեսը կատարեալ մեռելի դէմք ստացաւ: Լուցիանը միեւնոյն կերպով սպանեց ձրօնզագին, ինչպէս մի քիչ առաջ Վլաւդիոսը սպանէլ էր հանգուցեալ ամիշտ-թագաւորին: Խւ այդ բոլորը երեւակայեցէք, մի աննշան ժամանակից յետոյ, Վլաւդիոսը տեսնումէ թատրոնական բեմի վրայ կատարուելիս: Որովհետև ձիշտ իւր եղեռնական դերն էր կատարլում, այդ պատճառաւ խղճմասնը սկսեց այնպիսի արագութեամբ տանջել թագաւորին, որ իսկոյն հրամայել տուաւ լուսաւորել իրա ննջարանը և շուտով հեռանալ գահինձից, պատճառ բերելով իւր յանկարծակի հիւանդութիւնը:

Թագաւորը գնալուց յետոյ իսկոյն վարագոյը իջաւ: Ամիշտը այժմ բո-

լորը տեսնելով, արդէն լիապէս համոզուեց որ ուրուականը ջշմարիտ իւր հայրն էր և ոչ աչքի երևոյթ: «Երա նախկին կասկածները արդէն փարատուեց: Այսարուած իրողութիւնը դրականապէս հաստատում է, որ իւր հօր սպանողը ինքը թագաւորն է: Եւա այդպիսի դաժան ախրութեան մէջ, յայտնեց աօրացիային, որ պատրաստ է ուրախութեամբ նուիրել ուրուականին հազար ֆունդ ստերլինդ:

Չը կամենալով գեռ իրագործել ուրուականից սացած ծրագիրը, ամելչութեամբ համարեց նախապէս տեսնուել իւր մայր-թագուհու հետ և ապա վրէժինդիր լինել եղայրասպան թագաւորից:

Եյդ պատճառաւ հրամայեց յայտնել մօրը թէ նա ցանկանումէ թագուհու հետ խօսել, նրա առանձնասենեակում, միայն գաղտնի:

Թագաւորը շուտուց ունէր այդ ցանկութիւնը և կամենում էր, որ մայրը նրան իրատի, թէ վերջին ժամանակները ամելչութեամբ անբաւական է: Թագաւորի կամքը

առաջ տանելու համար, ամելչտի հրաւելը այդ գեպօւմ մի լաւ միջոց էր: Բայց, միւնոյն ժամանակ, թագաւորը երկիւղ էր կրում, թէ մի գուցէ իւր կինը, ամելչտի-մայլը իւր որդուց լսած բոլոր խօսակցութիւնը ըլ յայտնի իրան, կարծելով, որ որդին, որին շատ սիրում է, կարողէ հօր աչքից ընկնել: Այսպիսի թագաւորը ջերմաջերմ ցանկանում էր, որ մօր և որդոյ մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը մի առ մի յայտնի լինի իրան: Եւ այդ պատճառով, նա հրամայեց իւր հին սենեկապետ Պօլօնիուսին, որ սա թագնուելով կնոջ առանձնասենեակում, ուր պիտի տեղի ունենար խօսակցութիւնը, աշխատի այն տեղից լսել ամենը և, մի առ մի, յայտնել իրան: Պէտք է այստեղ նկատել, որ Պօլօնիուսը այդ տեսակ գործերի մէջ լիսպէս կատարելագործուած էր: Եւա ծայրահեղ ստոր բնաւորութեան աէր էր: Չարութիւնը նրա համար մի նոր բան չէր: «Եա միշտ սիրում էր, ինչ ձանապարներով էլ որ լինի, ուրիշների գաղտնիքը իմանալ:

Երբ ձամելէտը ներկայացաւ մօրը,  
վերջինը վերին աստիճանի խստութեամբ  
սկսեց նախատել նրան իւր չար բնաւորու-  
թեան համար: Թագուշին յայտնեց ձամ-  
լէտին, թէ նրա հայրը (թագուշին Ալաւ-  
դիոսի հետ պսակուելուց յետոյ անուա-  
նումէր նրան ձամլէտի հայր) բաւականին  
գրգռուած է նրա դէմ; իւր անհանդիստ  
բնաւորութեան համար: Որդիական բաղ-  
ցը զգացմունքը կատարեալ անպատուած  
տեսնելով, որ անգութ աւազկը, եղբայրա-  
սպան Ալաւդիոսը, իրան հայր է անուան-  
վում; ձամլէտը իսկոյն և խորին արհա-  
մարանքով պատասխանեց. «Դուք մայր,  
աւելի անպատուեցիք իմ հօրը»: Ալիրը  
անմիջապէս պատասխանեց, որ նրա պա-  
տասխանը բոլորովին անհիմնէ: «Պատաս-  
խանը կատարեալ համապատասխան է  
հարցին» ասաց ձամլէտը: Թագուշին  
աւելի չարանալով նկատեց, թէ նա թող-  
մուանայ, թէ ինչ անձնաւորութեան  
հետ գործ ունի: «Ո՛չ, ես ուրախու-  
թեամբ կ'ցանկանայի մոռանալ բայց  
տարաբաղդաբար չեմ կարող» պատասխա-

նեց ձամլէտը: «Դուք թագուշի գոլով,  
կոչվումէք Ձեր ամուսնոյ եղօր կէնը և  
ինձ հարազատ մայր: Բայց ես կ'ցանկա-  
նայի, որ Դուք նորա կինը չը լինէիք»:  
«Ինչ պիտի արած» պատասխանեց թա-  
գուշին: «Ես նկատումեմ, որ դու ոչ մի  
յարգանք չես զգում գէպի ինձ, և այդ  
պատճառաւ հարկից ստիպուած պիտի մի  
ուրիշ մարդ կանչեմ, որ կարողանայ բեղ  
հետ խօսել»: Եւ նա աճապարելով վեր  
կացաւ տեղից, որ կանչել թագաւորին կամ  
Պօլօնիուսին: Աակայն ձամլէտը թոյլ չը-  
տուաւ մօրը կատարելու իւր ասածը: «Նա  
կարծումէր, որ իւր խօսքերը շատ կարելիէ  
ստիպէին մօրը խոստովանուելու իւր յան-  
ցանքը այդ անգութ սպանութեան մէջ:  
ձամլէտը բռնելով թագուշու ձեռքից  
բռնի նստացրեց իւր մօտ: Թագուշին  
երկիւղ կրելով, որ մի գուցէ որդին իւր  
խելագալութեան մէջ մի որ և է վաս հաս-  
ցնի իրան, իսկոյն պոռաց: Այդ միջոցին  
պատուշանի վարագորի ետեից մի ձայն  
լսուեց, որ ասումէր. «Վզատեցէք թա-  
գուշուն . . . « ձամլէտը անմիջապէս

աղաւնու պէս թռչելով տեղից և կարծելով, թէ այդ թագաւորի ձայնն է, որը թագնուելով կամեցելէ լսել իրանց մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը, իսկոյն մերկացրուց սուրբ և ցցեց ուղիղ այն տեղը, որ տեղից դուրս էր եկել ձայնը: Պոռացող ձայնը իսկոյն կարուեց: Համէլէտը համոզուեց, որ ձայն հանող մարդը, արդէն սպանուած է: Հանելով վարագուրի տակից անշնչացած դիակը, երիտասարդ իշխանը տեսաւ, որ երեա կայական թագաւորի փոխարէն սպանուած է դժբախտ Պօլօնիուսը, որ կանգնած այդ տեղ լրտեսի դեր է եղէլ կատարելիս: «Ո՛չ իմ անբաղդ զլուխս» բացականչեց թագուհին: « Ինչպիսի անգութ և արիւնաշեղ գործ կատարեցիր դու Համէլէտ » « Այդ մայր իմ, Ճմարիտ է, այդ գործը անգութ և արիւնաշեղ է, բայց նա այնքան դատապարտելի չէ, ինչքան ձերը: Դուք սպանեցիք ձեր թագաւոր ամուսնոյն և պսակուեցիք նորա եղբօր հետօ: Համէլէտը այնքան զբգուած էր, որ կամենումէր հէնց այդ տեղ վերջացնել մօր

հետ իւր խօսակցութիւնը: « Եա ցանկանումէր, իւր սրտի մէջ տպաւորուած բոլոր եղելութիւնը, մի առ մի, յայտնել մարդասպան թագուհուն: « Երախայրը, ասաց Համէլէտը, պարտաւորեն հնազանդութեամբ տանել ծնողաց սխալմունքները, եթէ արդարե նոքա նշանաւոր և շոշափելի չեն: Բայց եթէ մայրը գործէ մի անգութ եղեռնագործութիւն, որդին կատարեալ իրաւունք ունի միշտ և ամեն ժամանակ դատապարտել նրան, հետեաբար և խօսել նրա հետ միշտ սառն կերպով: Այդ սառնութիւնը կարողէ մինչեւ անգամ բարի ներգործութիւն ունենալ եղեռնագործի վրայ, հետեաբար և նրան ուղիղ ճանապարհի բերել: Այն ժամանակ որդին պարտաւոր է ներողամիտ լինել դէպի իւր մայրը: » Համէլէտը իւր պերճախօս և սրտաշարժ ատենաբանութեամբը մի առ մի մերկացրուց մօր բնաւորութեան բոլոր կեղառտ յատկութիւնները: « Եա լիշեցրուց մօրը, թէ դա ինչպէս շուտով մոռացաւ իւր հանգուցեալ ամուսնոյն, որի ցաւակ

սպանութիւնից յետոյ, շուտով պսակուեց  
եղբայրասպան Ալաւդիոսի հետ։ Երի-  
տասարդ իշխանը բացարձակ յայտնեց, թէ  
այն երգութից յետոյ, որով նա խօստացել  
էր, մի անգամ ընդ միշտ, հաւատարիմ  
մնալ իւր ամուսնոյն և այժմեան ստոր  
վարմունքից յետոյ, ինքը հրաժարվումէ  
այլ ևս հաւատ ընծայել կանանց խօս-  
քերին։ «Այսուհետեւ, ասումէր Համեմտը,  
իմ աչքում գոյութիւն չունին կանանց  
բարեգործութիւնները։ Ամուսնական կա-  
պը գարտակ և անմիտ երգումէ, իսկ կրօնը  
կատակերգութիւն և անհեթեթ ցնորք։»  
«Ես ասումէր. երկինքը ամբողջապէս  
պատել է արեան ամպերով այդ տեսակ  
չարագործութեան համար, բայց երկիրը  
չէ ընդունումնրա ոչ մի կաթիլն էլ իւր  
մէջ։ Յետոյ իշխանը ձեռով ցոյց տալով  
երկու պատկերներ, որոց մէկը հանգու-  
ցեալ թագաւորինն էր, իսկ միւսը եղբայ-  
րասպան Ալաւդիոսինը, ասաց. «Տեսէր ինչ  
ահազին զանազանութիւն կայ այդ եր-  
կու անձնաւորութեանց մէջ։ Իմ հօր  
երեսը արտափայլեցնումէ հեղութիւն,

հայուածքը կատարեալ Աստուածային է,  
խոպոպիքը կարծես Ապալօնինը լինին,  
Ճակատը նման է Արամազդի Ճակատին,  
աչքերը կարծես Ճիշդ Արարինը լինին,  
իսկ հասակը այնքան պարթեն է, որ կար-  
ծես թէ Արեկուրիինը լինի։ Ահա այդ  
սքանչելի մարդն էր քո ամուսինը։» Յե-  
տոյ գառնալով իշխանը հօրեղքոր պատ-  
կերին ասաց. «Տեսէր. այդ մարդը նման է  
մի ապականուած և կեղտոտ անձնաւորու-  
թեան, որ համարձակուեց սպանել իւր  
հարազատ եղքօրը։ Իսկ Պառք առանց  
կարմրելու ընտրեցիք այդ գալշելի մար-  
դուն ձեզ ամուսին։» Թաւգուհին ամօթ-  
խածութիւնից չգիտէր ինչ անել։ Խղճ-  
մանքը սկսեց կայծակի հարուածքներ  
տալ սրախն։ Որդւոյ խօսքերը թագու-  
հու սրտի բոլոր կեղտոտութիւնները  
մերկայրին մի առ մի։ Այսուհետեւ միթէ  
կրկին պիտի ապրէք այն մարդու հետ, որը  
գողութեամբ և աւազակութեամբ խլեց  
ինձնից իմ հօր գահը։» Համեմտը շա-  
րունակելով խօսակցութիւնը, յանկարծ  
տեսաւ հօր ուրուականը կանգնած տան

մէջ, ձիշդ միւնոյն դէմքով, ինչպէս որ  
առաջին անգամ երկեցել էր նրան։ Օ, ար-  
հուրեալ Համլէտը հարցրուց ուրուակա-  
նից, թէ ինչո՞ւ համարէ եկել նա և ինչո՞ւ  
կամենում իրանից։ Ուրուականը յիշե-  
ցրուց Համլէտին, թէ նա իւր խօստման  
համաձայն, պարտաւորէ վրէժինդիր լինիլ  
թագաւորից, բայց նա մոռանումէ կատա-  
րել իւր պարուքը։ 'Նա հրամայեց իշխա-  
նին հանգստացնել մօրը, որպէս զի ցաւը  
և զիշտը մահուան պատժի ըլ ենթարկեն  
նրան։ Եյդ խօսքերի հետ ուրուականը  
իսկոյն անյայտացաւ։ Բայցի Համլէտից,  
ոչ ոք ըլ տեսաւ նրան։ Իշխանը ինչքան  
աշխատումէր հաւատացնել մօրը ուրուա-  
կանի երևալը, հետևապէս և ցոյց տալ  
նորա կանգնած տեղը, բայց մայրը չէր  
հաւատում նրան, կարծելով թէ նա  
երկեակայական ցնորը է պատմում։ Պէտքէ  
ասաց 'որ թագուհին ականատես լինելով  
որդւոյ խօսակցութեանը, մի աներեսոյթ  
էակի հետ, բաւականի զարհուրեց։ Բայց  
հետզետէ համոզուելով Համլէտի խելա-  
գարութեան վրայ, սկսեց մոռանալ բոլոր

եղելութիւնը։ Իշխանը վերսախն աշխա-  
տեց հաւատացնել մօրը, թէ իւր նկարա-  
գրած ուրուականը երկեակայութեան  
պտուղ չէ։ ինչպէս նա կարծումէ, այլ  
երեսյթը խոր գերեզմանից դուրս եկած  
հօր կերպարանքն է, որ ամենայն իրա-  
ւամբ բողոքումէ կնոջ և իւր հարա-  
զատ եղբօր գործած եղեռնագործութեան  
դէմ։ Որպէս ապացոյց իւր ասածներին,  
իշխանը ինդրեց մօրը տեսնել նրա շըն-  
չերակի կանոնաւոր զարկը, որպէս զի  
յետոյ համոզուի, որ իւր պատմածը ար-  
դարե կենդանի իրողութիւն է, և ոչ  
խելագարութեան արգասիք։ 'Ի վերայ  
այսր ամենայնի, Համլէտը ինդրեց մօրը,  
որ դա ունայն յոյսերով չխափի իրան,  
թէ իւր որդւոյ պատմածները ցնորաբա-  
նութիւններ են, հետևապէս և տեսիլի  
գոյութիւնը երբէք չուրանայ, այլ ընդ-  
հակառակը կարելոյն չափ աշխատի խու-  
սափել թագաւորից, խոստովանուելով  
Աստուծոյ առաջ իւր դժոխային յան-  
ցանքը։ 'Եթէ Դուք կ'զըդչաք ձեր  
յանցանքը և միշտ կը յիշեք ձեր նախկին

ամուսնոյն» ասաց ձամլէտը, «Ես կ'խնդրեմ  
հօրիցս ներողամիտ լինել դէպի ձեզ»:  
Այլը խօստացաւ կատարել որդւոյ խոր-  
հուրդը և այդպիսով վերջ տրուեցաւ մօր  
և որդւոյ խօսակցութեանը:

Ձամլէտը, յիշելով իւր եղեռնագոր-  
ծութիւնը, կամեցաւ կրկին անդամ տես-  
նել կէս ժամ առաջ իւր ձեռքով սպա-  
նուած մարդու ով լինելը: «Նա շտապով  
քաշեց անշնչացած դիակը սենեակի մէջ,  
տեսաւ, որ իսկապէս սպանուածը դժբաղդ  
Պօլօնիուսն է, իւր սիրուհի Օֆելիայի  
հայրը: Վնելով դիակը սենեակի մի ան-  
կիւնում, իշխանը շատ ցաւեց իւր գոր-  
ծած անիրաւութեան վրայ:

Դժբաղդ Պօլօնիուսի մահը առիթ  
տուաւ եղայրասպան թագաւորին, աքսո-  
րել ձամլէտին իւր թագաւորութիւնից:  
«Նա զգաց, որ ձամլէտի գոյութիւնը իւր  
և թագաւորութեան համար վասակարէ:  
Այդ պատճառաւ ըստ կամենալով մահուան  
պատժի ենթարկել իշխանին, որին ան-  
սահման սիրումէր ժողովուրդը և մայրը,  
հրամայեց հենց միւս օրը քշել ձամլէտին

դէպի Անգլիայ: Թագաւորը իւր հրամա-  
նագրի մէջ յայտարարեց, թէ նա, 'ի  
պատիւ ժողովրդեան և իւր սիրելի կնոջը,  
երիտասարդ իշխանի մահից ազատելով,  
կամենումէ ուղարկել նորան արքունական  
նաւով Անգլիայ, հսկողութեամբ երկու  
պալատականների: Թագաւորը այդ երկու  
աստիճանաւորներին յանձնեց նա ևս մի  
նամակ, որ պարտաւոր էին ճշդութեամբ  
յանձնել Անգլիոյ թագաւորին: Այդ  
ժամանակ Անգլիոյ քաղաքական իրա-  
ւունքները Պանիայի թագաւորի ձեռին  
էր, որին ևվճարումէր որպէս հարկ մի որոշ  
գումար: Յիշեալ նամակի մէջ, թագաւորը  
յայտնելով ձամլէտ իշխանի աքսորուելու  
գլխաւոր պատճառը, հրամայել էր հէնց  
որ իշխանը գուրս եկաւ նաւից ծովի ափ  
իսկոյն սպանեն: Ձամլէտը լաւ իմանալով  
որ իւր դէմ որոդայթ է լարուած, գիշերը  
նամակը բացեց և միջի բովանդակու-  
թիւնը իմանալուց յետոյ, դանակով քե-  
րեց իւր անունը և նրա տեղը գրեց իրան  
Անգլիայ տանող երկու պալատականների:  
անունները:

Ճանապարհին Համբէտին և երկու  
պալատականներին տանող նաւի վրայ մի  
խումբ յուղկահարներ յարձակուեցան, և  
նրանց մէջ սկսուեց սարսափելի պատե-  
րազմը: Համբէտը կամենալով ցոյց տալ իւր  
քաջութիւնը ծովային աւազակներին, կայ-  
ծակի արագութեամբ թռաւ նոցա նաւը  
ու սկսեց կատաղի կերպով կռուել:

Այսուեղ Պանիական նաւը յետ  
գտանալով սկսաւ փախէլ, թողնելով  
իշխանին ծովային աւազակների ձեռքում:  
Խոկ պալատականները, որոնք մնացել էին  
նաւում, պարտը համարեցին թագաւորի  
նամակը նոյնութեամբ հասցնել Անդիհայ,  
երբէք չը մտածելով նրա բովանդակու-  
թեան փոփոխութեան ենթարկուիլը:

Օսովային աւազակները բաւականին  
բարեհոգի գտնուեցան դէպի Համբէտը:  
Նոքա իմանալով իրանց գերիի ով լինելը  
և միենոյն ժամանակ, աչքի առաջ ունե-  
նալով, որ իշխանը իրանց ցոյց տուած  
բարերարութեան փոխարէն, կարողէ նո-  
ցա համար բարեխօս լինել Պանիայի  
թագաւորի առաջ, իսկոյն ողջ և առողջ

դուրս բերին նրան մի նաւահանգիստ, որ  
շատ հեռու չէր թագաւորանիստ քաղա-  
քից: Այդ աեղից Համբէտը մի նամակով  
իմաց տուեց թագաւորին թէ ինչպիսի մի  
բաղդատոր դէպը դուրս բերաւ նրան այդ  
նաւահանգիստը: Յայտնեց նա ևս թէ  
ինքը մի օրից յետոյ կլինի թագաւորի  
պալատում: Երբ իշխանը վերադառնում  
էր հօր պալատը, Ճանապարհին քաղաքից  
փոքր ինչ հեռու, հանդիպեց մի տիտոր  
տեսարանի: Այդ հանդէսը ներկայացնում  
էր գեղեցկուհի օրիորդ Օֆելիայի թա-  
զումը որին Համբէտը անսահման սի-  
րում էր: Օֆելիան իւր կենդանութեան  
ժամանակ կազմում էր Համբէտի միակ  
սիրոյ առարկան, որից դուրս նա ոչինչ  
միսիթարանք չէր գտնում իրա համար:  
Պոլօնիուսի մահից յետոյ նա սկսեց միշտ  
տիրել: Երբ որ Օֆելիան իմացաւ, որ  
հայրը սպանուելէ իւր սիրած իշխանի  
ձեռքով և այն էլ սարսափելի խայտառա-  
կութեամբ, նա այնպիսի հարուած ստա-  
ցաւ, որ կարծ ժամանակում, բոլորովին  
կորցրուց իւր բանականութիւնը: «Կա-

միշտ քաղումէր զանազան տեսակ ծաղիկներ և բաժանելով պալատական կանանցը, խնդրումէր, որ նոքա ներկայ գտնուին հօր թաղման հանդէսին։ Եշրջում էր անդադար սիրոյ և մահուան երգեր, իսկ երբեմն այնպիսի խառնաշփոթ բառեր էր արտասանում, որ անկարելի էր լինում մի բառ անդամ հասկանալ։ Պալատից ոչ հեռու հոսումէր մի առու, որի մօտ բուսած ուռենիի լայն տերևները դլուխները խոնարհած նայումէին դէպի հոսող ջուրը։ Մի անգամ Օֆելիան միայնակ մնալով, նարգիզ և մարգարտածաղիկ քաղեց և նրանից մի պսակ հիւսելով, գնաց առուի մօտ գտնվող ուռենիի ծառից կախ տալով։ Բարձրացաւ կանգնեց մի ճիւղել վրայ։ Ա երջինս բարակ լինելու պատճառաւ խսկոյն ծոռուեց՝ բաշելով իւր հետ և անբաղդ Օֆելիային։ Օրիորդի շորերը փաթաթուելով ծառի ճիւղեց, ինքը ևս կախ ընկաւ և սկսեց երգել զանազան չար ողիների վրայ, որոնք մի ժամանակ որպէս թէ ապրումէին երկրագընտի վրայ։ Դժբաղդ օրիորդ, ես մաածումէի բեղ համար հարսանեկան առագաստ պատրաստել, բայց այժմն գերեզմանդ եմ զարդարում։ Դու պէտքէ լինէիր իմ ամիշտի սիրելի

երկար չը շարունակուեց։ «Երա փաթաթուած շորերը սկսեցին թրջուիլ և նրա ծանրութիւնից ողորմելին ամբողջ մարմնով խորասուզուեց ջուրի մէջ, Օֆելիայի ուրախ երգին վերջ տուաւ անգութմահը։ Ահա այդ դառն տանջանքով մեռած Օֆելիայի թաղման հանդէսն էր, որ կատարվումէր ամիշտի ներկայութեամբ։ Այս տեղ ներկայ էին մեռածի եղբար Լայեարդը, թագաւորը, թագուհին և բոլոր պալատականները։ Ամելիալ դեռ չը իմանալով, թէ ինչ է նշանակում այդ հանդէսը, կանգնեց մի կողմում, որ չխանգարուի կրօնական հանդէսը։ «Եա տեսաւ, որ թագուհին ինքը ծաղիկներ է թափում հանգուցեալի դագաղել վրայ, ինչպէս որ հին ժամանակ ընդունուած էր այդ մեռնողել բարեկամների կողմից անել։ Ծագուհին իւր դամբանականի մէջ, ի միջի այլոց, ասաց հետեւեալը։ «Անդին օրիորդ, ես մաածումէի բեղ համար հարսանեկան առագաստ պատրաստել, բայց այժմն գերեզմանդ եմ զարդարում։ Դու պէտքէ լինէիր իմ ամիշտի սիրելի

տիկինի» : Իշխանը տեսաւ, թէ ինչպէս  
Օֆելիայի եղբարը ցանկանումէր, որ  
ըրոջ գերեզմանում մանուշակներ բուսնին:  
«Ա նոյնպէս տեսաւ, երբ Լայեարդը  
խելագարի պէս զցելով իրան գերեզմանի  
մէջ, աղաչեց հանդիսականներին, որ իրան  
էլ թաղին իւր սիրելի քրոջ հետ: Համ-  
լէտի դէպի օրիորդ Օֆելիան ունեցաց  
սէրը աւելի և աւելի սկսուեց բորբո-  
քուել իւր մէջ: «Ա չկարողանալով սառ-  
նարտութեամբ նայել այդ տիսուր տե-  
սարանին, շատ նախանձուեց, որ եղբայր  
Լայեարդը աւելի ցաւացկութիւն է յայտ-  
նում, դէպի Օֆելիան, քան ինքը: Իւր  
կարծիքով հազար եղբօր սէրը երբէք չէր  
կարող համեմատուիլ իւր սիրոյ հետ:  
Դուրս գալով իւր դարանից, կայծակի  
արագութեամբ զցեց իրան Օֆելիայի  
գերեզմանի վրայ, որ տեղ կանգնած էր  
և Լայեարդը: Այդ վերջինը ճանանչելով  
Համլէտին և միւնոյն ժամանակ լիշելով,  
որ հօր և քրօջ մահուան պատճառը դա  
է բռնեց նրան ինչպէս իւր ոխերիմ թշ-  
նամիին սկսեց այնքան խեղդել, մինչեւ որ

ժողովականները շտապով ազատեցին Համ-  
լէտին նրա ձեռքից: Խաղումից յետոյ  
իշխանը ներողութիւն խնդրեց Լայեար-  
դից իւր սխալմունքի համար, որովհետեւ  
նա կարող էր մասնել որ Համլէտը յար-  
ձակվում էր Օֆելիայի գերեզմանի վրայ:  
Ա իրան արդարացնելու համար, հա-  
ւատացրուց Լայեարդին, որ այդ վերջինի  
կրած վիշար սիրելի քրոջ մահուան առ-  
թիւ այնքան զգալի եղաւ իրան, որ բո-  
լորովին կորցրեց իրա բանականութիւնը:  
Շուտով երկու երիտասարդք, վերստին  
հաշառուեցին միմիանց հետ:

Թագաւորը, տեսնելով երկու երիտա-  
սարդների հաշտութիւնը շատ նախան-  
ձուեց: «Ա կամենում էր, ինչ ձեռվ էլ  
որ լինի, երիտասարդ իշխանին անպատ-  
ճառ սպաննել տալ: Այդ պատճառաւ նա  
սկսեց զրգուել Լայեարդին, որ սա աշ-  
խատի վիճաբանութեան մէջ մանել Համ-  
լէտի հետ, որպէս զի կարողանայ մենա-  
մարտութեան կանչել նրան: Բաղդի բեր-  
մամբ թագաւորի չար զիտաւորութիւնը  
կատարուեց: Համլէտը ընդունեց մենա-

մարտութեան հրաւերը: «Եշանակուած  
օրը բոլոր պալատականները պէտքէ ներկայ  
գտնուեին երկու երիտասարդների մէջ  
տեղի ունենալիք մենամարտութեանը:  
«Եախապէս թագաւորը խորհուրդ տուեց  
Լայեարդին, որ դա իւր սուսերի ծայրին  
թոյն քսի, որպէս զի հէնց առաջին հա-  
րուածից ձամբէտը մեռնի: Պալատական-  
ները բաժանուեցին երկու կուսակցու-  
թեան. մէկը անցաւ ձամբէտի կողմը,  
իսկ միւսը Լայեարդի: Երկու երիտասարդը  
էլ արդէն յայտնի էին բոլոր պալատական-  
ներին, որպէս սուսերով լաւ մարտնչողներ:   
ձամբէտը չը կարծելով անդամ, որ Լայ-  
եարդը կը դաւածանի իրան, առանց  
նախապէս նրա սուսերին նայելու, վեր  
առաւ իւր սուրը: Բայց Լայեարդը  
հակառակ մենամարտութեան օրէնքի,  
վեռ առաւ սուսերներից ամենասուրը, այն  
էլ թոյն քսածը: Ակզեից Լայեարդը սկսեց  
խաղալ ձամբէտի հետ այնպիսի խորաման-  
կութեամբ, որ փոքր մնաց հանդիսական-  
ները կարծէին, թէ յաջողութիւնը և  
յաղթութիւնը իշխանի կողմը պիտի անց-

նի: Օճազաւորը կեղծաւորութեամբ սկսեց  
ուրախանալ, թէ ձամբէտը յալթող պիտի  
հանդիսանայ: Խմեց այդ տեղ իշխանի  
թանկադին կենացը: Ուրախութիւնից  
մինչև անդամ գրադ բռնեց, որ յաղթողը  
ձամբէտը պիտի լինի: Ահա այս տեղ  
Լայեարդը սկսեց փոքր առ փոքր գրգռուել  
և մօտենալով ձամբէտին, իւր թոյնոտ  
սուսերի ծայրով մի այնպիսի անբուժելի  
վէրք հասցրուց, որ այլ ևս առողջանալ  
նրան անհնարին էր: Ձամբէտը սաստիկ  
զայրացաւ, և իսկոյն վերցնելով Լայեար-  
դի թոյնոտ սուսերը, միեց նրա սիրով,  
նրա դաւածանութեանը համար: Այդ  
արիւնահեղ ողբերգութեան մէջ թագու-  
էին յանկարծ աղաղակեց, թէ իրան գե-  
ղել են: Եւ իսկապէս թագուհին չիմա-  
նալով սեղանի վրայ դրած բաժակի մէջ  
թոյն լինելը, միամտաբար վերցնում է և  
փոքր ինչ խմում: Բանից դուրս է գալիս,  
որ թագաւորը, կամենալով ձամբէտին  
անպատճառ սպանել, հրամայում է պատ-  
րաստել մի բաժակ թոյն, որպէս զի եթէ  
նրա յաղթութիւնը յաջողուի, այն ժա-

մանակ այդ թոյնով լիք բաժակը գինու  
տեղ ինքը իւր ձեռքով առաջարկի ձամ-  
իշին ըմպելու, նրա յաջող և ուրախ  
յազթութեան համար: Յայց նա իւր չար  
դիտաւորութիւնը նախապէս մոռանում է  
այդ առթիւ յայտնելու թագուհուն: Ո՞ի  
քանի ըուպէից յետոյ թագուհին մեռած  
էր: ձամիշար նկատելով, որ այդ տեղ  
որոգայթ է լարուած իւր դէմ, անմիջա-  
պէս հրամայեց սենեակի դռները փակել,  
որպէս զի կարողանայ մեղաւորին դանել:  
Լայեարդը յայտնեց ձամիշին, որ նա ի  
զուր տեղը նեղութիւն չը բաշի որո-  
նելու մեղաւորին, քանի որ դաւաճանը  
ինքն է, որ այդպիսի անզգամութիւն է  
գործել: Քաջ իմանալով՝ որ կես ժամից  
յետոյ պիտի մեռնի, Լայեարդը բոլոր  
եղելութիւնը մանրամասնաբար պատմեց  
իշխանին: «Սա յայտնեց, որ սուսերի  
ծայրը որով ստացել էին վէրքեր, թոյնոտ  
էր այդ պատճառաւ նոյս վէրքերը ան-  
բուժելի են, հետեւապէս և կես ժամից  
յետոյ պիտի մեռնին: Յայտնեց նմանա-  
պէս, որ այդ անզգամութիւնների հեղե-

նակը ինքը՝ թագաւորն է: Այդ որոգայթը  
լարել էր նա մի միայն ձամիշարի դէմ:  
Ախամեո Լայեարդը աւարտելով իւր խօս-  
քերը, վերջին անգամ ներողութիւն  
ինդրեց իշխանից, իւր դաւաճանութեան  
համար, որը թագաւորի թելաղբութիւնից  
էր առաջացած: ձամիշար իմանալով, որ  
ինքը ևս կես ժամից յետոյ պիտի մեռնի,  
վերցրուց Լայեարդի սուսերը, որի ծայ-  
րին զեռ մնացել էր փոքր ինչ թոյն,  
ցցեց իւր նենգամիտ հօրեղբոր՝ Ակա-  
դիոսի սիրար և այդպիսով ազատեց հա-  
զարաւոր մարդկանց նրա հպատակու-  
թիւնից, և միենոյն ժամանակ էլ ճշգու-  
թեամբ կատարեց իւր հօր՝ ուրուականին  
տուած խօստումը: ձամիշար սպանեց  
այն մարդուն, որը սպանելով իւր հարա-  
զատ եղբօրը հակառակ խղճի և օրինաց  
պսակուել էր նրա կնօջ հետ, հետեւապէս  
և սեփհականացը հանգուցեալի թա-  
գաւորական գահը: Յետոյ, զգալով իւր  
մահուան մօտենալը, ինդրեց իւր հաւա-  
տարիմ բարեկամ ձօրացիային, չսպանել  
իրան, (որովհան նա ևս ուզումէր ձամ-

լէտի հետ միատեղ մեռնել) այլ մանրաւ-  
մասնաբար պատմել այդ եղելութիւնը  
բոլոր աշխարհին: Որովհետեւ ձօրացիան  
սկզբից մինչև վերջը ականատես էր պա-  
տահած իրողութեանը, խօստացաւ ձշ-  
դութեամբ կատարել հանգուցեալի պատ-  
ուերը: Ձամլէտը, բաւականանալով իւր  
բարեկամի այդ խօստումից, կնքեց իւր  
մահկանացուն: Իսկ ձօրացիան բոլոր  
ժողովականների հետ արտասուբ թափե-  
լով, Ձամլէտի աղնիւ հոգին յանձննեց  
երկնային նախախնամութեանը: Ձամլէտի  
աղնիւ և բարի բնաւորութեան պատճա-  
ռաւ, ժողովրդը անխնախիր սիրում էր  
նրան: Եթէ նա կենդանի մնար, փառք  
և պատիւ պիտի բերեր Պանիայի թա-  
գաւորութեանը:

Ի բաց առեալ մի քանի տպագրական սխալ-  
ներ՝ խնդրում ենք հետեւեալ բառելը այսպէս  
կարդալ.

երես.	առջ	սխալ.	ուղղութ.
40	—	16	կախ տալով — կախ տալու.
41	—	4	տիկնի — տիկնը.



859

2013

